

«ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024

Երևան 2025

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ ԿՌԿ) ֆեմինիստական իրավապաշտպան կազմակերպություն է: ԿՌԿ-ի տեսլականն է հայաստանյան հասարակությունում կանանց հավասար և ինքնորոշ կարգավիճակի հաստատումը և հայրիշխանական հասարակարգի կողմից կնոջ նկատմամբ կիրառվող բռնաճնշումների և սահմանափակումների վերացումը: ԿՌԿ-ն իր գործունեությամբ ձգտում է հասարակության մեջ վարքային և նորմատիվային փոփոխության՝ ներազդելով պետական քաղաքականության, սոցիալ մշակութային և օրենսդրական դաշտերի վրա: ԿՌԿ-ն հիմնադրվել է 2003թ.-ին և **գործում է թեմատիկ 3 հիմնական ուղղություններով՝**

- ֆեմինիստական ապահով տարածք և կանանց ու աղջիկների զորեղացում
- սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք
- կանանց իրավունքների ջատագովություն

ԿՌԿ թեմատիկ ուղղությունների մասին պատմող կարճ հոլովակը դիտել կարող եք այստեղ: Սույն փաստաթուղթն ամփոփում է ԿՌԿ 2024թ. գործունեությունը՝ ըստ թեմատիկ հիմնական ուղղությունների:

Ֆեմինիստական ապահով տարածք

Հիմնադրման առաջին իսկ օրվանից ԿՌԿ-ն կանանց տարբեր խմբերի համար ստեղծել է ապահով և հյուրընկալ միջավայր: Այս ապահով տարածքում անհատները հնարավորություն ունեն իրենց փորձով կիսվելու, քննարկումների մեջ ներգրավվելու և արտահայտվելու՝ առանց առչնվելու որևէ խտրականության ու քննադատության: Աշխատում ենք **երկուշաբթիից ուրբաթ՝ 12:00-ից մինչև 18:00-ը՝ բացառությամբ չորեքշաբթի օրերի**, և մեր ապահով տարածքը բաց է աշխատելու, սովորելու, մեր գրադարանից օգտվելու և աշխատակիցների հետ շփվելու համար: Այստեղ կազմակերպում ենք բազմաթիվ *քննարկումներ, տեղեկատվական հանդիպումներ, կինոդիտումներ, գրքերի ակումբներ, տարբեր միջոցառումներ,* որոնք ուղղված են մասնակիցների բարօրության և հոգեկան առողջության բարելավմանը: 2024թ. ընթացքում ԿՌԿ ֆեմինիստական ապահով տարածք է այցելել **353 անձ**՝ տարբեր միջոցառումների մասնակցելու և կենտրոնի տրամադրած ծառայություններից օգտվելու համար:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս կազմակերպել ենք Կանանց իրավունքների երկու եռօրյա դասընթացներ՝ փետրվարի 16-18-ը և հունիսի 14-16-ը: Առաջին դասընթացին մասնակցել է **23 անձ**, իսկ երկրորդին՝ **24**: Դասընթացների արդյունքում մասնակիցները հնարավորություն են ունեցել ֆեմինիստական ենթադրամաշնորհային նախագծեր իրականացնելու: Առաջին դասընթացի արդյունքում իրականացվել են **4 դրամաշնորհային ծրագրեր**, այդ թվում՝ կանանց բարօրության հավաք, դեռահաս աղջիկների իրավագիտակցման բարձրացման հանդիպումներ, հայ կանանց մասին տեղեկատվական հարթակ (armfemmes), գենդերային հավասարության թեմայով հանդիպումներ: Երկրորդ դասընթացի արդյունքում ևս **4 դրամաշնորհային ծրագիր** է իրականացվել, այդ թվում՝ դեռահաս աղջիկների հետ կանանց իրավունքների թեմայով իրազեկման ճամբար, երիտասարդ աղջիկների համար կլիմայական պայմաններին հարմարվեցված գյուղատնտեսական բիզնեսի դասընթաց, բռնի տեղահանված կանանց համար աշխատանքային իրավունքների թեմայով իրազեկման հանդիպումներ, առողջական խնդիրներ ունեցող երեխաների մայրերի համար սթրեսադիմակայունության հանդիպումներ:

Իսկ այստեղ կարող եք դիտել Լուրերի անդրադարձը եռօրյա դասընթացին:

Այս տարի ևս կազմակերպել ենք «Աղջիկները խոսում են» ծրագրի հերթական շրջանը: Ծրագրի **8 սեսիաներին** մասնակցել են աղջիկներ ՀՀ տարբեր մարզերից և Երևանից: Աղջիկները խոսում էին *ինքնաճանաչման, առողջ հարաբերությունների, մարմնի դրական ընկալման, ֆեմինիզմի, ակտիվիզմի* և նմանատիպ թեմաների շուրջ:

ԿՌԿ ֆեմտարածքի հիմնական ծրագրերից են նաև ամենամյա **արտ-ակտիվիստական աշխատարանները**: 2024թ. հուլիսի 13-ին **Մարտունիում** կազմակերպվեց նման աշխատարան, որի ընթացքում քննարկեցինք ֆեմինիզմի և արվեստի միջոցով ակտիվիզմը, ապա միասին զարգացրինք մեր արտ-ակտիվիստական գաղափարները և իրականացրինք դրանք՝ գրաֆիտիների տեսքով:

Հուլիսի 26-28-ը կազմակերպել էինք **«Աղջիկների* զորեղացման ճամբար 2024»**, որին մասնակցեց **19 անձ**: Ճամբարն անդրադարձել է *ֆեմինիզմի, ինքնախնամքի և հոգեկան բարօրության, առաջնորդության և հավասար մասնակցության, սեռական ու վերարտադրողական առողջության* և նմանատիպ թեմաների:

Ֆեմտարածքի միջոցառումներից են նաև ֆեմախոսությունները: 2024թ. ունեցել ենք 7 **ֆեմախոսություն** հետևյալ թեմաների շուրջ.

- COVID-19-ի ազդեցությունը կալանավորված և դատապարտված կանանց վրա
- Շուշանիկ Կուրղինյան. հեղափոխական ֆեմինիստի կյանքն ու ժամանակը
- Կլիմայի փոփոխության ազդեցությունը կանանց վրա. ֆեմախոսություն և մանդալայի պատրաստում
- Կանանց աշխատանքային իրավունքները
- Աբորտի հիմնախնդիրը Հայաստանում 1970-90թթ.
- Հյուսված պատմություններ
- Մարդու պապիլոմավիրուս (ՄՊՎ/HPV)

Սեպտեմբերից ի վեր՝ մեր ֆեմտարածքում կազմակերպել ենք **3 կինոդիտում**՝ Կարամել, Խաղից դուրս և Երկխոսություն զամբյուղում (ֆիլմի ռեժիսոր Վարդուհի Բալյանի հետ հարցուպատասխանով):

Ակցիաներ

Կանանց իրավունքների համար պայքարն, իհարկե, ամբողջական չէր լինի առանց մարտի 8-ին կազմակերպվող դիմադրության և կանանց իրավունքների ընդլայնման արշավի: Այս տարի մենք կազմակերպել էինք մարտիության բաց քննարկում:

Քննարկմանը հաջորդեց սոցիալական մեդիա արշավ՝ ուղղված կանանց՝ մարտիության մեր հաղորդագրությունն էլ ավելի տարածելուն:

Իսկ Գենդերային բռնության դեմ պայքարի 16-օրյակի շրջանակում նոյեմբերի 25-ին իրականացրինք լուռ դեմոնստրացիա՝ գենդերային բռնություն վերապրած անձանց սոլիդարություն հայտնելու, հասարակությունում բռնության հանդեպ հանդուրժողականության մթնոլորտին անհամաձայնություն հայտնելու և պետությանը՝ բռնության դեմ պայքարի արդյունավետ օրենսդրական մեխանիզմներ ընդունելու կոչ անելու նպատակով:

Նոյեմբերի 25-ին ընդառաջ և 16-օրյակի ընթացքում նաև իրականացրել ենք համապարփակ արշավ՝ ուղղված գենդերային բռնության տարբեր ձևերի, մասնավորապես՝ ընտանեկան բռնության, հանրային վայրերում և աշխատավայրում սեռական ոտնձգության մասին իրազեկվածության բարձրացմանը:

Հոգեբանական հանդիպումներ

ԿՌԿ հոգեբանները նշված շրջանում անցկացրել են «Անձնային աճ» խորագրով խմբային թերապիաների շարք երկու տարբեր խմբերի հետ՝ յուրաքանչյուրը 9-ական հանդիպումով, իսկ ևս **21 անձի** տրամադրվել է անհատական հոգեբանական խորհրդատվություն:

Իրավաբանական խորհրդատվություն

2024թ. մեր անվճար իրավաբանական խորհրդատվության ծառայության համարին ստացել ենք **237 զանգ**, իսկ տեղում խորհրդատվություն տրամադրել **19 այցելուի**:

Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք

2023թ. նոյեմբերին ԿՌԿ-ի մեկնարկած տեղեկատվական դասընթացների շարքը Արցախից բռնի տեղահանված հղի կանանց համար շարունակվել է 2024թ.-ի հունվարից ի վեր: Դասընթացների շարքը բաղկացած էր **6 հանդիպումներից**, որոնց ընթացքում քննարկվել են մի շարք կարևոր թեմաներ: Ընդհանուր առմամբ՝ դասընթացներին մասնակցել է **61 կին:**

Միջազգային պլանավորված ծնողավարության ֆեդերացիայի նախագծի շրջանակում ԿՌԿ-ն տրամադրել է սեռական և վերարտադրողական առողջության ծառայություններ համակարգայնորեն անտեսված խմբերի կանանց: Ծրագրի նպատակն էր երաշխավորել, որ Արցախից բռնի տեղահանված կանայք հասանելիություն ունեին հիմնարար բժշկական աջակցության: 2023-ի դեկտեմբերից մինչ 2024-ը մայիս բժշկական ծառայություններ են մատուցվել **379 կանանց**: Նրանք բոլորը Արցախից բռնի տեղահանված անձինք էին:

Մարտ ամսին մեկօրյա վերապատրաստման դասընթաց իրականացվեց Երևանի հենակետային բժշկական քոլեջի մանկաբարձության ամբիոնի **26 ուսանողների** համար:

Կանանց սեռական և վերարտադրողական իրավունքների խթանման ուղղությամբ առաջարկներ ներկայացրինք, ինչպես նաև հանդիպումներ ունեցանք ՀՀ ազգային ժողովի պատգամավորների հետ, որոնց նպատակն էր քննարկել «ՀՀ մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի մասին» օրենքում նախատեսվող փոփոխությունները պատգամավորների կողմից:
Արդյունքում, հուլիսի 12-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունեց վերոնշյալ օրենքում փոփոխությունների նախագիծը, որն ի թիվս այլ կարգավորումների թույլ է տալիս կանանց իրականացնել դեղորայքային աբորտ **արտահիվանդանոցային պայմաններում մինչև հղիության 8 շաբաթը:** Այս փոփոխությունը կարևոր առաջընթաց է կանանց վերարտադրողական իրավունքների առաջխաղացման համար:



Այս առիթով հոկտեմբերի 22-ին և 23-ին շուրջ **200 բուժաշխատողների** համար իրականացրինք առցանց դասընթաց-քննարկում Դեղորայքային մեթոդով հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների թեմայով: Դասընթացի նպատակն էր մասնակիցներին ծանոթացնել դեղորայքային աբորտի իրականացման նոր կարգին, միջազգային չափորոշիչներին ու պրակտիկային:
Որպես դասընթացի վերջնարդյունք՝ 200 հոգուց ընտրվեցին **20 բուժաշխատողներ** արտագնա հանդիպման մասնակցելու համար, որտեղ առավել մանրամասն քննարկվեցին դեղորայքային աբորտի նոր ուղեցույցի սկզբունքները:

Սեպտեմբերի 28-ին՝ ապահով աբորտի միջազգային օրվան ընդառաջ, իրականացրինք սոցիալական մեդիա արշավ: Այն ուղղված էր դեղորայքային աբորտի կիրառման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների մասին իրազեկվածության բարձրացմանը: Արշավի ընթացքում անդրադարձանք աբորտի հասանելիության խնդիրներին ու դրանց լուծման կոլեկտիվ ջանքերին՝ աբորտը բոլորի համար խարանից զերծ իրականություն դարձնելու համար:

Կանանց իրավունքների ադվոկացիա

Կանանց ռեսուրսային կենտրոնի ադվոկացիոն թիմը շարունակում է իր աշխատանքները՝ ազդելով պետական քաղաքականությունների, օրենսդրության վրա՝ դարձնելով դրանք գենդերազգայուն և ներառական կանանց տարբեր խմբերի համար: 2024թ.-ին թիմը իրականացրել է մի շարք նախաձեռնություններ պետական գերատեսչությունների հետ:

Աշխատանքային իրավունքների ուղղությամբ իրականացրինք «Կանանց նկատմամբ գենդերային խտրականության դրսևորումները աշխատանքային հարաբերություններում Հայաստանում» հետազոտությունը: Ոլորտում այլ կազմակերպությունների ջանքերը համախմբելու համար ունեցանք թվով 15 իրավապաշտպան կառույցների հարթակ, որը կզբաղվի կանանց աշխատանքային իրավունքների շուրջ ադվոկացիայով: Այս նախաձեռնությունները հնարավոր եղավ իրագործել Սոլիդարիթի Սենթեր հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի խթանման նպատակով ձևավորել ենք **22 կազմակերպությունների ցանց**, որի հետ քննարկում ենք ճգնաժամերի ժամանակ ծառայությունների մատուցման համակարգային խնդիրներն ու կանանց կազմակերպությունների դերը: Այդ ցանցով ունեցանք հանդիպում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Աննա Ժամակոչյանի հետ, որի ժամանակ քննարկեցինք պետություն և քաղաքացիական հասարակություն համագործակցությունը ճգնաժամային իրավիճակներում և համատեղ արձագանքը գենդերային հիմնախնդիրներին ճգնաժամերի ժամանակ:

Այս տարի մասնակցեցինք **ՄԱԿ Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 68-րդ նստաշրջանին** (CSW68): Հանձնաժողովի ամենամյա նիստը գենդերային հավասարության և կանանց ու աղջիկների հզորացման վերաբերյալ ՄԱԿ-ի ամենամեծ գլոբալ հավաքն է: CSW68-ի խորագիրն էր *«Ավելի արագ հասնել գենդերային հավասարության և հզորացնել բոլոր կանանց ու աղջիկներին՝ հասցեագրելով աղքատությունը»:*

Այս ամիսներին ունեցել ենք նաև մի շարք հանդիպումներ ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից Հայաստանին ուղղված առաջարկների մշտադիտարկման ուղղությամբ, մասնավորապես՝ ներգրավվելով ՀՀ-ում գործող դիվանագիտական համայնքի ներկայացուցիչներին, քաղաքացիական հասարակությանը և պետական կառույցների, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներին:

Նոյեմբերի 22-ին ավելի քան **30 հասարակական կազմակերպությունների** ներկայացուցիչների հետ ունեցանք քննարկում «Կանանց փոխհատվող խմբերի իրավունքների բացթողումը հիմնահոս քաղաքացիական հասարակության օրակարգում. դիտավորությո՞ն, թե՞ բացթողում» թեմայի շուրջ: Խոսեցինք միասնական ադվոկացիայի, սոլիդարության և համագործակցության մասին:

Աշխատանքային իրավունքների խթանման աշխատանքների շրջանակներում **14 իրավապաշտպան կազմակերպությունների** հետ հիմնել ենք համագործակցության հարթակ, որի նպատակն է միասնական ադվոկացիան: Խմբի հետ ունեցել ենք մի քանի արտագնա հանդիպումներ, որոնց ժամանակ քննարկել ենք պետության հետ աշխատանքը, աշխատանքային իրավունքների ոլորտում պետության բարեփոխումների օրակարգը:

Գենդերային բռնության դեմ պայքարի 16-օրյակի շրջանակներում դեկտեմբերի 10-ին կազմակերպեցինք աշխատանքային քննարկում՝ նվիրված աշխատավայրում գենդերային բռնության և ոտնձգության կանխարգելման, արձագանքման և արդյունավետ պետական վերահսկողության մեխանիզմների ներդրմանն ու ամրապնդմանը Հայաստանում:

2024թ. երկրորդ կիսամյակը ԿՌԿ ադվոկացիան թիմի համար լի էր նաև փորձի փոխանակման և կարողությունների զարգացման հնարավորություններով: Թիմի իրավաբան Նվարդ Փիլիպոսյանը հոկտեմբերին Մարոկկոյում մասնակցեց Աշխատողներին աջակցող իրավաբանների միջազգային ցանցի տարեկան ֆորումին, որին ներկա էին **200 իրավաբաններ** աշխարհի տարբեր ծայրերից: Ֆորումի ընթացքում Նվարդը հանդես եկավ որպես խոսնակ Ֆեմինիզմը և աշխատանքային իրավունքները թեմայով պանելային քննարկման ժամանակ և ներկայացրեց ԿՌԿ փորձը՝ աշխատավայրում սեռական ոտնձգությունների կանխարգելմանն ու արձագանքմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների ադվոկացիայի վերաբերյալ:

Հոկտեմբերի 19-ից նոյեմբերի 9-ը Նվարդը մասնակցեց նաև ԱՄՆ պետական դեպարտամենտի կողմից կազմակերպվող Միջազգային այցելուների առաջնորդության ծրագրին՝ Արձագանք աշխատանքային իրավունքների պաշտպանության առկա կարիքներին թեմայով: Ծրագրի ընթացքում նա հնարավորություն ունեցավ ԱՄՆ **4 նահանգներում** հանդիպումներ ունենալու և փորձի փոխանակում իրականացնելու աշխատանքային իրավունքների պաշտպանության թեմայով:

Կանանց ՔՀԿ-ների կարողությունների զարգացում

2024թ. շարունակվել և ամփոփվել են Շվեդիայի աջակցությամբ տրամադրված ենթադրամաշնորհային ծրագրերը գործընկեր **24 կազմակերպությունների կողմից:** Ընդհանուր առմամբ իրականացվել է 7 սոցիալ հոգեբանական աջակցության, 7 տնտեսական զորեղացման, 7 սոցիալ հոգեբանական աջակցության և տնտեսական զարգացման համատեղ ենթադրամաշնորհային ծրագրեր Արցախից բռնի տեղահանված կանանց և աղջիկների հետ աշխատող տեղական ՔՀԿ-ների կողմից: Ենթադրամաշնորհային ծրագրերից օգտվել է ավելի քան **60 000 շահառու:** Անցած երեք տարիների աշխատանքների ամփոփմանը կարող եք ծանոթանալ մեր նոր տեսահոլովակում:

Համաժողովների մասնակցություններ

Հուլիսի 1-ին տեղի ունեցած Ժողովրդավարության հայկական ֆորումի մեկնարկային պանելային քննարկմանը՝ նվիրված մարդու իրավունքներին, մասնակցեց նաև ԿՌԿ համահիմնադիր Լարա Ահարոնեանը: Ելույթը դիտել կարող եք այստեղ:

Այս դեկտեմբերին մասնակցեցինք **AWID 2024 15-րդ միջազգային ֆորումին**, որին ներկա էին ոգեշնչող ֆեմինիստներ, ակտիվիստներ և սոցիալական փոփոխության համար պայքարողներ ամբողջ աշխարհից: Որպես կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում աշխատող կազմակերպություն՝ ուրախ էինք լինել համերաշխության, գիտելիքների փոխանակման և հավաքական տեսլականի այս տարածքի մի մասը:

Փոխակերպող քննարկումներից մինչև զորեղացման սեմինարներ՝ ուսումնասիրել ենք գենդերային արդարության խթանման, կայուն շարժումների ստեղծման և մեր ուժն ու իշխանությունը մեզ վերադարձնելու ռազմավարություններ: Էներգիան, իմաստությունը և կապերը, որ ձեռք բերեցինք ֆորումի ընթացքում, իսկապես անգնահատելի էին. դրանք նպաստում են ավելի արդար և հավասար աշխարհի կառուցելու մեր նվիրվածությանը:



ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

կանանց համար

093 94 88 86



ԱՋԱԿՑԵՔ ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ՝

www.womenofarmenia.org